ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«17» սեպտեմբերի 2021

Լոռու
մարզպետարան
Մարզպետ՝ Ա.Խաչատրյանին

N 165

Հարգելի պարոն Խաչատրյան

Կից Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 30-Ա և թիվ 31-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30-Ա

2021 թվական 17 Սեպտեմբերի

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Շենավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շենավան համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Համայնքի ղեկավար՝ Ս.Մինիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ Շենավան,2-րդ փողոց 45շ.
հեռ.077-57-07-57 էլ. փոստ՝ shenavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17 » Սեպտեմբերի 2021 թվականի N 31 –Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով,ՀՀ Կառավարության 12.04.2001թվականի , թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Շենավան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասը՝ անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելուն:

- Ծածկագիր 06-086-0003-0021, Շենավան համայնքի 3-րդ փողոց 31բնակելի տուն հասցեում գնվող անշարժ գույքի՝ 0.057644 հա հողամաս, /բնակելի տուն 89.61քմ, մառան 8.37քմ/, մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատեսք, /վկ. N 26082021-06-0040/ աճուրդ վաճառքի մեկնարկային գինը սահմանել 380000 /երեք հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ,

2. Սահմանել՝աճուրդի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարը չափը մեկնարկային գնի 50 %-ի չափով,նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5%- ի չափով:

3.Համայնքի ղեկավարին՝աճուրդ-վաճառքի մասին մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի՝ անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան